ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/142

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ի տնօրեն Է. Փոթոյանի (պետական գրանցման վկայական թիվ 273.110.1148876),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 27.05.2021թ. թիվ 26/26-1/8548-2021 գրությամբ «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 21.05.2021թ. թիվ 05/252 գրության հիման վրա, 27.05.2021թ. թիվ 26/26-1/8548-2021 գրությամբ նախաձեռնել է «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «էֆ Բի էյ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«էֆ Բի էյ» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/142 ընթացակարգի շրջանակներում 02.06.2021թ. ժամը 09:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և հայտնել հետևյալը.

««էֆ Բի էյ» ՍՊԸ-ն մասնակցել է «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից հայտարարած թիվ Թ4ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-21/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և 15.02.2021թ-ին կնքել է թիվ Թ4ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-21/7-6 պայմանագիրը:

Պայմանագիրը ուժի մեջ է մտել 15.02.2021թ.-ին:

Համաձայն պայմանագրի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի՝

Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:

Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Իսկ պայմանագրի նույն հավելվածի աղյուսակում, որպես մատակարարման ժամկետ նշված է՝ մատակարարման ժամկետը մինչև 25.12.2021թ.

21.04.2021թ-ին պատվիրատուն տալիս է իր առաջին պահանջարկը, որի համար մեր կազմակերպությունը ունի առնվազն 20 օրացուցային օր մատակարարելու համար, այսինքն մինչև 2021թ.-ի մայիսի 11-ը, քանի որ մեր կողմից չի եղել որևէ համաձայնություն ապրանքը ավելի կարճ ժամկետում մատակարարելու:

28.04.2021թ.-ին պատվիրատուն ուղարկում է մեզ գրություն խնդրելով շտապ մատակարարել 21.04.2021թ-ին ներկայացված պահանջարկը: 28.04.2021թ-ի ներկայացրած գրությունը չի կարող դիտարկվել նոր պահանջարկ, քանի որ իր գրության մեջ նշել է, որ խոսքը վերաբերում է 21.04.2021թ-ի պահանջարկին:

Որից հետո 2021թ.-ի մայիսի 14-ին ստանում ենք ծանուցում, որ պատվիրատուն միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը 14-րդ չափաբաժնի մասով ամբողջությամբ համաձայն պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 բ) ենթակետի և նույն օրը պայմանագրի լուծման մասին հայտարարությունը հրապարակում է տեղեկագրում:

Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 բ) ենթակետում ասվում է՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավել:

Այնինչ 14.05.2021թ.-ի դրությամբ ապրանքի մատակարարման ժամկետները չեն խախտվել 5 օրից ավել:

Ավելին, պայմանագրով սահմանված է միայն Մատակարարման ժամկետը՝ մինչև 25.12.2021թ., որևէ այլ ժամկետ պայմանագրով սահմանված չէ:

Այստեղից պարզ է դառնում, որ գնորդի/պատվիրատուի գործողությունները դուրս են պայմանագրի պահանջներից և որ գնորդը մայիսի 14-ին իրավունք չուներ միակողմանի լուծել պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը՝ խնդրում ենք Ձեզ չբավարարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը և «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ին չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

3. <u>«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.05.2021թ. թիվ 05/252 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի և «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ի միջև 15.02.2021թ. կնքված Թ4ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-21/7-6 ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծվել է 14-րդ չափաբաժնի մասով՝ հիմք ընդունելով՝ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1 բ) ենթակետը:

Խնդրում ենք Ձեզ «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) պարբերության հիման վրա»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/142 ընթացակարգի շրջանակներում 02.06.2021թ. ժամը 09:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/142 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/142 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի և «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ի միջև 15.02.2021թ. կնքվել է ԹԴՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-21/7-6 ծածկագրով բժշկական պարագաների մատակարարման պայմանագիր (հետայսու՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 20 հատ «Սպեղանի 2.5 սմ*5մ», 80 հատ «ԷՍԳ 60*30», 4000 հատ «Սկարիֆիկատոր» և 30 հատ «Ժապավեն» 110*30 ապրանքատեսակների մատակարարման ժամկետ է սահմանվել մինչև 25.12.2021թ., մատակարարման ենթակա քանակը՝ ըստ պատվերի:

3. «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ին ուղղված 14.05.2021թ. թիվ 05/239 ծանուցմամբ հայտնել է, որ «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի և «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ի միջև 15.02.2021թ. N ԹԴՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-21/7-6 ծածկագրով կնքված պայմանագիրը միակողմանի մասնակի լուծում է՝ հիմք ընդունելով 15.02.2021թ. կնքված N ԹԴՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-21/7-6 ծածկագրով պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 բ) ենթակետը: Պայմանագիրը լուծվում է 14-րդ չափաբաժնի մասով ամբողջությամբ:

4. Պատվիրատուի կողմից 14.05.2021թ. տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.05.2021թ. թիվ 26/26-1/8548-2021 գրությունը, «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 21.05.2021թ. թիվ 05/252 գրությունը՝ կից փաստաթղթերով, «էֆ Բի էյ» ՍՊԸ-ի դիրքորոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ

որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի և «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ի միջև 15.02.2021թ. կնքվել է ԹԳՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-21/7-6 ծածկագրով բժշկական պարագաների մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 20 հատ «Սպեղանի 2.5 սմ*5մ», 80 հատ «ԷՍԳ 60*30», 4000 հատ «Սկարիֆիկատոր» և ***<u>30 հատ «ժապավեն» 110*30 ապրանքատեսակների</u>*** մատակարարման ժամկետ է սահմանվել մինչև 25.12.2021թ., մատակարարման ենթակա քանակը՝ ըստ պատվերի:

«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ին ուղղված 14.05.2021թ. թիվ 05/239 ծանուցմամբ հայտնել է, որ «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի և «Էֆ Բի Էֆ» ՍՊԸ-ի միջև 15.02.2021թ. N ԹԳՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-21/7-6 ծածկագրով կնքված պայմանագիրը միակողմանի մասնակի լուծում է՝ հիմք ընդունելով 15.02.2021թ. կնքված N ԹԳՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-21/7-6 ծածկագրով պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 բ) ենթակետը: Պայմանագիրը լուծվում է 14-րդ չափաբաժնի մասով ամբողջությամբ:

Պատվիրատուի կողմից 14.05.2021թ. տեղեկագրում հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ Պայմանագրի շրջանակներում Պատվիրատուն «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ին ուղղված ***<u>21.04.2021թ. պահանջագրով</u>*** խնդրել է, համաձայն 15.02.2021թ. բժշկական պարագաների մատակարարման ԹԳՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-21/7-6 ծածկագրով պայմանագրի 2.1.1 կետի, մատակարարել հետևյալ ապրանքները.

Հ/հ	Անվանում	Հ/մ	Քանակ

7	ԷՍԳ ժապավեն 60*30	հատ	30
14	***Ֆլյուրոգրաֆիայի ժապավեն 110*30.5***	***փուփ***	***5***

Այնուհետ՝ Պատվիրատուն «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ին ուղղված ***28.04.2021թ. պահանջագրով խնդրել է մատակարարել <u>21.04.2021թ.-ին ուղարկված բժշկական պարագաների պահանջարկը:</u>***

Պատվիրատուն «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ին ուղղված 06.05.2021թ. թիվ 05/229 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի և «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ի միջև 15.02.2021թ. Թ4ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-21/7-6 ծածկագրով կնքված պայմանագրով ձեր ընկերությունը ստանձնել է բժշկական պարագաների մատակարարման պարտավորություն: 21.04.2021թ. Ձեր ընկերության էլեկտրոնային փոստին ուղարկվել է հետևյալ բժշկական պարագաների պահանջարկը,

Հ/հ	Անվանում	Չ/մ	Քանակ
14	***Ֆլյուրոգրաֆիայի ժապավեն 110*30.5***	***փուփ***	***5***

որը պետք է մատակարարվեր պայմանագրի 2.1.1 կետի համաձայն:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ձեր ընկերության կողմից փաստացի չի կատարվել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն տրամադրում է 1 /մեկ/ աշխատանքային օր պահանջված ապրանքի մատակարարման համար, հակառակ դեպքում Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/ և գրավոր տեղեկացնել լիազոր մարմին, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի»:

Պատվիրատուն «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ին ուղղված 14.05.2021թ. թիվ 05/239 ծանուցմամբ հայտնել է, որ «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի և «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ի միջև 15.02.2021թ. N Թ4ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-21/7-6 ծածկագրով կնքված պայմանագիրը միակողմանի մասնակի լուծում է՝ հիմք ընդունելով 15.02.2021թ. կնքված N Թ4ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-21/7-6 ծածկագրով պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 բ) ենթակետը: ***Պայմանագիրը լուծվում է <u>14-րդ չափաբաժնի մասով ամբողջությամբ:</u>***

Այսպիսով՝ Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 30 հատ «Ժապավեն» 110*30 ապրանքատեսակի մատակարարման ժամկետ է սահմանվել մինչև 25.12.2021թ., մատակարարման ենթակա քանակը՝ ըստ պատվերի:

Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ ***փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր***...:

Պայմանագրի 2.1.1-րդ կետի համաձայն՝ ***Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետով սահմանվել է, որ ***Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծել պայմանագիրը*** /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ համաձայն պայմանագրի միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցման՝ Պատվիրատուն՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերությունը, 14.05.2021թ. Պայմանագիրը 14-րդ չափաբաժնի մասով լուծել է այն հիմքով, որ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի, մինչդեռ՝ ուսումնասիրելով Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման համար նախատեսված առավելագույն ժամկետը և հաշվի առնելով այն փաստը, որ Պայմանագրի շրջանակներում առաջին պատվերը Պատվիրատուի կողմից Ընկերությանը ներկայացվել է 21.04.2021թ.-ին, որում ներառված է եղել նաև 14-րդ

չափաբաժնով նախատեսված 5 հատ «Ժապավեն» 110*30 ապրանքատեսակը, հետևաբար գտնում եմ, որ Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ՝ 14.05.2021թ., դեռևս ավարտված չեն եղել Պայմանագրով առաջին պատվերի դեպքում նախատեսված առնվազն 20 օրացույցային օրվա և Պայմանագրի էական խախտում համարվելու (5 օրից ավելի) ժամկետները:

Ինչով պայմանավորված արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից Պայմանագիրը 14-րդ չափաբաժնի մասով լուծվել է մատակարարման համար նախատեսված առավելագույն ժամկետի (15.05.2021թ.) լրացած չլինելու պայմաններում՝ զրկելով Ընկերության Պայմանագրով նախատեսված ժամկետում ապրանքը մատակարարելու հնարավորությունից:

Ուստի նման պայմաններում, հնարավոր չէ արձանագրել «էֆ Բի էյ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ ոչ իրավաչափ պայմանագրային լուծման հետևանքները չեն կարող վրա հասնել և հանգեցնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 27.05.2021թ. թիվ 26/26-1/8548-2021 գրությամբ «էֆ Բի էյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**